ԳԼՈՒԽ Դ.

Մահ Աբգարու. Կին Նորա Հեղինէ Թագուհին Հայոց. Մահ և թղթիմ Նորին։ Նահատակութիւն Յակոբայ արդարոյն։

ԵՐՋԱՆԻԿՆ և առաջինն 'ի Թադաւորս քրիստոնէից Երանելին Աբգար, մկրտեցաւ 'ի Թադէոսէ առաքելոյ ամենայն տամբք իւրովք և բժշկեցաւ 'ի ցաւոցն, և պայծառացաւ ինքն և քաղաքն ողջոյն քրիստոնէական սուրբ հաւատով, և հաստատեցաւ անդ եկեղեցի Քրիստոսի. և գրեալ զանազան թուղթս յարեւմուտս և յարեւելս վասն Քրիստոսի Աստուածութեանն, վախճանեցաւ Թադաւորեալ ամս 38։ Իսկ Անանէ որդի Նորա Թադաւորեալ յետ Նորա երեաց զոտաճարս կռոց, ետ սպանանել զհայրապետն Ադդէ յաթոռ վարդապետութեան, եւ դադարեցոյց զքարոզութիւն Աւետարանին եւ անկեալ սիւն 'ի վերայ Նորա բարձաւ 'ի կենաց։ Եհաս Սանդրուկ, որ Թադաւորէր 'ի Հայս, կոտորեալ ջնջեաց զմետ Աբգարու։ Եւ զդէչխոյն Հեղինէ առաքեաց յետս 'ի Խառան 'ի քաղաք ծննդեան իւրոյ, Թողեալ նմա զտիկնութիւն ամենայն Միջագետաց փոխանակ բարեացն, զորս միջնորդութեամբ Նորա գտեալ էր յԱբգարէ։ Այլ Թագուհին Հեղինէ զարդարեալ քրիստոնէական սուրբ հաւատովք եւ շնորհօք Ս. Հոգւոյն, ոչ հանդուրժեաց բնակիլ 'ի մէջ հեթանոսաց, զի առ աստուածպաշտութեանն ոչինչ համարէր զվառս աշխարհիս և զվայելչութիւն տիկնութեան իւրոյ. չոքաւ յԵրուսաղէմ յամի Տեառն իբր 42, յաւուրս Կղոդեայ կայսեր, մինչ տիրէր սով սաստիկ յԵրուսաղէմ և 'ի սահմանս Հրէաստանի, ըստ մարգարէութեանն Ագաբոսի. Գործ. ԺԱ. 28։ Եւ տուեալ զամենայն գանձս իւր՝ ետ բերել ցորեան առատ յԵգիպտոսէ և յայլ ուստեքէ, և առատագութ սրտիւ բաշխէր եւ կերակրէր զամենայն կարօտեալս, որք դիմէին առ նա, ոչ ինչ խորհելով զհրէայս և զհեթանոսս 'ի հաւատացելոց. որոյ օգնութիւն եհաս մեծ զօրավարն Խուրան, և հաւատարմութեամբ ծառայեաց մինչեւ 'ի մահ Նորին։ Գտանին 'ի ձեռագիրս ինչ բանք վասն Հեղինեայ թարգմանեալ